Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Եվրամիության հետ տնտեսական համագործակցության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:
2. Վարչությունը իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, այլ իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի (այսուհետ՝ Նախարար) և գլխավոր քարտուղարի հրամաններով, Նախարարության կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:
3. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում Նախարարը՝ Նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ, ով նախապես այն համաձայնեցնում է վարչության պետի և ոլորտը համակարգող նախարարի տեղակալի հետ:
4. Վարչության կառուցվածքում ընդրգկվում են Վարչության պետը և Վարչության բաժինները:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ

5. Վարչության հիմնական նպատակն է՝

Եվրամիության հետ տնտեսական համագործակցության ոլորտում իր իրավասության շրջանակներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Նախարարությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Վարչության հիմնական խնդիրներն են՝

1) Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական Միություն «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» (այսուհետ՝ ՀԸԳՀ)՝ առևտրին առնչվող մասով դրույթների և համապատասխան ճանապարհային քարտեզի

իրականացման աշխատանքների, ինչպես նաև համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական Միություն տնտեսական համագործակցության ապահովումը,

2) Եվրամիության կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող աջակցության համակարգումը, մասնավորապես՝ ֆինանսավորման համաձայնագրերի շուրջ բանակցությունների իրականացումը և համակարգումը, համաձայնագրերի շրջանակներում ստանձնած պարտավորությունների իրականացման ընթացքի դիտանցումը և գնահատումը,

3) Եվրոպական Միության կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգ» (GSP+) արտոնյալ առևտրային ռեժիմի արդյունավետ իրականացումը և դիտանցումը,

4) Եվրոպական Միության կողմից տրամադրվող «GSP+» արտոնյալ առևտրային ռեժիմի շրջանակներում արտահանման գործընթացների դյուրացման ապահովումը, «Գրանցված արտահանողների համակարգի» կիրառումը, համակարգում արտահանողների գրանցումը և առնչվող անհրաժեշտ բոլոր գործընթացների իրականացումը,

5) Եվրոպական հարևանության գործիքների ներքո իրականացվող ծրագրերի դիտանցումը և համակարգումը,

6) Թվինինգ, Թայեքս, Սիգմա, Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրի և այլ գործիքների ծրագրային առաջարկների մշակման և հաստատված ծրագրերի կատարման աշխատանքների համակարգումը ու դիտանցումը,

7) ԵՄ Արևելյան Գործընկերության «Տնտեսական զարգացման և շուկայի հնարավորություններ» պլատֆորմի և վերջինիս ներքո գործող պանելների շրջանակներում իրականացվող աշխատանքների համակարգումը,

8) ԵՄ Արևելյան գործընկերության շրջանակներում ծրագրերի և նախաձեռնությունների իրականացման ապահովումը,

9) ԵՄ-ի հետ իրականացվող համագործակցության ընդհանուր համակարգման ապահովումը,

10) Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) հետ համագործակցության ապահովումը,

11) ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ-ի Առևտուր և առևտրին առնչվող հարցերի մասում ամրագրված դրույթների իրականացման շրջանակներում ԱՀԿ համաձայնագրերի պահանջներին և Հայաստանի Հանրապետության ստանձնած ԱՀԿ պարտավորություններին համապատասխանության ապահովումը,

12) ԱՀԿ համաձայնագրերի դրույթներով սահմանված, ինչպես նաև ԱՀԿ անդամակցությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման ապահովման ուղղությամբ աշխատանքների իրականացումը,

13) ԱՀԿ համաձայնագրերով սահմանված ծանուցման պարտավորությունների իրականացման ապահովումը՝ որպես Հայաստանի Հանրապետության ծանուցումների պատասխանատու մարմին,

14) Հայաստանի տարածաշրջանային ինտեգրման գործընթացների շրջանակներում իրականացվող աշխատանքների և մշակվող փաստաթղթերի՝ ԱՀԿ համաձայնագրերի պահանջներին համապատասխանության ապահովումը,

15) Եվրոպական Միության, Եվրասիական տնտեսական միության, Անկախ պետությունների համագործակցության, Առևտրի համաշխարհային կազմակերպության և միջազգային կազմակերպությունների շրջանակներում գործունեության, ինչպես նաև դրանց շրջանակներում ծրագրերի իրականացման դիտանցումը, վերլուծությունը և համապատասխան առաջարկությունների ներկայացումը:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

7. Վարչությունը կազմված է հետևյալ բաժիններից.

1) Եվրամիության հետ համագործակցության բաժին,
2) Եվրամիության ծրագրերի կառավարման բաժին,
3) Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի և Առևտրի համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ՀԸԳՀ և ԱՀԿ) բաժին:

8. Վարչության բաժիններն իրենց գործառույթները իրականացնում են միմյանց հետ համագործակցելով:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. **Եվրամիության հետ համագործակցության բաժնի գործառույթներն են.**

1) ԵՄ-ի հետ իրականացվող համագործակցության ընդհանուր համակարգման ապահովում,

2) ՀՀ-ԵՄ «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» առևտրի և առևտրին առնչվող մասով դրույթների և կիրարկման ճանապարհային քարտեզի իրականացման և դիտանցման ապահովում,

3) Հայաստանի ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ ներքո գործող Առևտրի հարցերով կոմիտեի նիստերի կազմակերպման, անցկացման, նիստերի շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացման ապահովում,

4) ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ ներքո ամրագրված ենթակոմիտեների նիստերի կազմակերպման, անցկացման, նիստերի շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացում,

5) ԵԱՏՄ շրջանակներում իրականացվող՝ առևտրային բնույթի օրենսդրական և նորմատիվաիրավական ակտերի, ներառյալ՝ ազատ առևտրի համաձայնագրերի մշակման և կարգավորմանն ուղղված գործունեության մշտադիրտարկում/փորձաքննություն՝ այն ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ-ի դրույթների հետ համադրման և երկկողմ ձեռք բերված պարտավորությունների հարգելու և ապահովման նպատակով,

6) Եվրամիության կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող աջակցության շրջանակներում ֆինանսավորման համաձայնագրերի շուրջ բանակցությունների իրականացման և համակարգման, համաձայնագրերի կնքման և հաստատման, համաձայնագրերի շրջանակներում ստանձնած պարտավորությունների իրականացման ընթացքի դիտանցման և վերահսկողության ապահովում, համաձայնագրերի իրականացման շրջանակներում ինքնագնահատման զեկույցների պատրաստում,

7) Եվրոպական Միության կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգին» (GSP+) Հայաստանի մասնակցության և դրա հետ կապված դիտանցման գործընթացներին առնչվող աշխատանքների կազմակեպում և երկրի զեկույցի պատրաստում,

8) ԵՄ կողմից տրամադրվող «GSP+» արտոնյալ առևտրային ռեժիմի շրջանակներում արտահանման գործընթացների դյուրացմանն ուղղված աշխատանքների ապահովում, «Գրանցված արտահանողների համակարգի» կիրառում, համակարգում արտահանողների տվյալների գրանցում, տվյալների թարմացում և դիտանցում,

9) Համագործակցության ապահովում REX համակարգում արտահանողների գրանցման մարմնի համագործակցությունը վարչական համագործակցություն իրականացնող մարմնի հետ և վերջինիս կողմից տվյալների հավաքագրման, ամփոփման և դիտանցման վերաբերյալ պարբերական տեղեկատվության ստացում,

10) ԵՄ Արևելյան Գործընկերության «Տնտեսական զարգացման և շուկայի հնարավորություններ» պլատֆորմի համակարգման աշխատանքների իրականացում,

11) ԵՄ Արևելյան Գործընկերության «Տնտեսական զարգացում և շուկայի հնարավորություններ» 2-րդ պլատֆորմի ներքո գործող Կառուցվածքային բարեփոխումների, ֆինանսական հատվածի, գյուղատնտեսության և ՓՄՁ-ների, Առևտրի, Թվային շուկաների ներդաշնակեցման պանելների աշխատանքների համակարգում,

12) ԵՄ Արևելյան Գործընկերության «Կապ, էներգաարդյունավետություն, շրջակա միջավայր և կլիմայի փոփոխություն» 3-րդ պլատֆորմի ներքո գործող Էներգետիկայի, Տրանսպորտի, Շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության պանելների աշխատանքների համակարգում.

13) ԵԱՏՄ-ում ընթացող ապրանքների և ծառայությունների միասնական շուկայի ստեղծման գործընթացի մշտադիտարկում՝ ապահովելու այդ գործընթացի՝ ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ դրությունների և ՀԳԸՀ կիրարկման ճանապարհային քարտեզների հետ համապատասխանելիությունը,

14) Եվրոպական Միության, Եվրասիական տնտեսական միության, Անկախ պետությունների համագործակցության, Առևտրի համաշխարհային կազմակերպության և միջազգային կազմակերպությունների շրջանակներում գործունեության, ինչպես նաև դրանց շրջանակներում ծրագրերի իրականացման դիտանցում, վերլուծություն և համապատասխան առաջարկությունների ներկայացում,

15) ԵՄ Հարևանության ներդրումային պլատֆորմի (NIP), Հարևանության ներդրումային հիմնադրամի (NIF), Եվրոպական ներդրումային բանկի (EIB), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD), Գերմանական զարգացման բանկի (KfW), ինչպես նաև եվրոպական այլ ֆինանսական և բանկային կազմակերպությունների հետ համագործակցության իրականացում,

16) ԵՄ աջակցության ծրագրերի շրջանակներում Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Ասիական զարգացման բանկի, Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության և այլ միջազգային կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող ծրագրերին մասնակցության ապահովում,

17) Առևտրային ներկայացուցիչների և ներդրողների գրասենյակի հետ համագործակցության ապահովում,

18) մասնակցություն Հայաստանի Հանրապետությունում ԵՄ պատվիրակության գրասենյակի հետ իրականացվող համագործակցությունից բխող աշխատանքներին,

19) Եվրոպական Միությունում Հայաստանի Հանրապետության առևտրական կցորդի հետ համագործակցության կազմակերպում, համակարգման աշխատանքներին մասնակցություն,

20) Նախարարի, ոլորտը համակարգող նախարարի տեղակալի, գլխավոր քարտուղարի, վարչության պետի հանձնարարականներով բաժնին վերապահված այլ գործառույթներ իրականացնում:

10. **Եվրամիության ծրագրերի կառավարման բաժնի գործառույթներն են.**

1) Թվինինգ, Թայեքս, Սիգմա, Սոսյու, Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրի և այլ գործիքների ներքո Հայաստանի Հանրապետությունում իրականացվող աշխատանքների համակարգում,

2) Աջակցություն Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններին Թվինինգ, Թայեքս, Սիգմա, Սոսյու, Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրի և այլ գործիքների ներքո

ծրագրային փաստաթղթերի մշակման և համապատասխան տեղեկատվության տրամադրման գործում,

3) Թվինինգ, Թայեքս, Սիգմա, Սոսյու, Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրի և այլ գործիքների ծրագրային առաջարկությունների ուսումնասիրություն, համատեղ մշակում և գնահատում,

4) Թվինինգ, Սիգմա, Սոսյու և այլ ծրագրերի, ինչպես նաև Թայեքս միջոցառումների դիտանցման աշխատանքների և դրանց արդյունքների գնահատման աշխատանքների կազմակերպում,

5) Թվինինգ, Թայեքս, Սիգմա, Սոսյու և այլ գործիքների ներքո Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների և ԵՄ համապատասխան փորձագետների հետ խորհրդակցությունների, աշխատաժողովների, ինչպես նաև ճանաչողական այցերի կազմակերպման աշխատանքների իրականացման համակարգում,

6) Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրի ու Հայաստան-Վրաստան տարածաշրջանային համագործակցության ծրագրի համակարգում, համապատասխան ծրագրային փաստաթղթերի մշակում և դրանց ներքո իրականացվող ծրագրերի դիտանցման ապահովում,

7) Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրի ու Հայաստան-Վրաստան տարածաշրջանային համագործակցության ծրագրերի գործընկեր պետությունների հետ հանդիպումների, նիստերի, շահառուների հետ խորհրդատվությունների ու վերապատրաստումների կազմակերպում, համակարգող մարմինների հանդիպումներին մասնակցության ապահովում,

8) Եվրամիության կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող աջակցության շրջանակներում համապատասխան ֆինանսավորման համաձայնագրերի շուրջ բանակցությունների իրականացման կազմակերպում, համաձայնագրերի շրջանակներում ստանձնած պարտավորությունների իրականացման ընթացքի դիտանցման ապահովում,

9) Հայաստանի Հանրապետության պետական մարմինների և հնարավոր շահառուների շրջանում ԵՀԳ գործիքների և դրա ներքո իրականացվող ծրագրերի հնարավորությունների ներկայացում, պարզաբանում և մասնագիտական խորհրդատվության տրամադրում,

10) Նախարարի, ոլորտը համակարգող նախարարի տեղակալի, գլխավոր քարտուղարի, վարչության պետի հանձնարարականներով բաժնին վերապահված այլ գործառույթներ իրականացնում:

11. **ՀԸԳՀ և ԱՀԿ բաժնի գործառույթներն են.**

1) ՀՀ-ԵՄ «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի»՝ առևտրին առնչվող մասի ամրագրված դրույթների իրականացման

շրջանակներում ԱՀԿ համաձայնագրերի պահանջներին և Հայաստանի Հանրապետության ստանձնած ԱՀԿ պարտավորություններին համապատասխանեցման ապահովում,

2) ՀՀ-ԵՄ «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» ճանապարհային քարտեզի իրականացման շրջանակներում ԱՀԿ համաձայնագրերի դրույթների և Հայաստանի Հանրապետության ստանձնած ԱՀԿ պարտավորությունների կատարման ապահովում,

3) ԱՀԿ Առևտրի դյուրացման համաձայնագրի ներքո երկրի ամրագրված պարտավորությունների իրականացման ապահովում, համապատասխան ծանուցումների ներկայացում,

4) ԱՀԿ շրջանակներում ՀՀ ամրագրված սահմանային մաքսատուրքերի դրույքաչափերի պարտավորությունների փոփոխության կոմպենսացիոն բանակցային գործթընացի իրականացման ապահովում՝ մասնավորապես Եվրամիության և ԱՀԿ այլ անդամների հետ,

5) ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի կողմից իրականացված «ՀՀ առևտրի կարգավորիչ և ընթացակարգային խոչընդոտների վերացում՝ կարիքների գնահատում» ուսումնասիրության ներքո առաջարկությունների և խորհուրդների հետագա իրականացման գործընթացների ապահովում,

6) Եվրոպական Միության և այլ երկրների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող արտոնյալ առևտրային ռեժիմների արդյունավետ իրականացնման և դիտանցման շրջանակներում ԱՀԿ համաձայնագրերի դրույթների և ՀՀ պարտավորությունների համապատասխանեցման ապահովում,

7) Հայաստանի տարածաշրջանային ինտեգրման գործընթացների և ԵԱՏՄ-ի շրջանակներում ընթացող առևտրային բնույթի համաձայնագրերի բանակցությունների շրջանակներում իրականացվող աշխատանքների և մշակվող փաստաթղթերի՝ ԱՀԿ համաձայնագրերի դրույթներին և Հայաստանի Հանրապետության ստանձնած ԱՀԿ պարտավորություններին համապատասխանեցման ապահովում,

8) ԵԱՏՄ շրջանակներում իրականացվող՝ առևտրային/մաքսային բնույթի օրենսդրական և նորմատիվաիրավական ակտերի, ներառյալ՝ ազատ առևտրի համաձայնագրերի մշակման և կարգավորմանն ուղղված գործունեության մշտադիրտարկում/փորձաքննություն՝ այն ԱՀԿ շրջանակներում Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանելիության ապահովման նպատակով,

9) Հայաստանի Հանրապետության առևտրատնտեսական հարաբերությունները կարգավորող օրենսդրական դաշտի՝ ԱՀԿ համաձայնագրերի դրույթներին համապատասխանեցման ապահովման աշխատանքների իրականացում,

10) ԱՀԿ համաձայնագրերով սահմանված ծանուցման պարտավորությունների իրականացման ապահովում՝ որպես Հայաստանի Հանրապետության ծանուցումների պատասխանատու մարմին,

11) ՀՀ պետական կառավարման մարմիններում գործող ԱՀԿ հարցման կետերի միջև համագործակցության և տեղեկատվական հոսքերի համակարգում՝ ապահովելու ԱՀԿ համաձայնագրերով ՀՀ ստանձնած պարտավորությունները,

12) ԱՀԿ քարտուղարությունում գործող ոլորտային և առևտրային հանձնաժողովների և կոմիտեների աշխատանքներին և այդ շրջանակներում իրականացվող ծրագրերին ՀՀ մասնակցության ապահովում, ՀՀ դիրքորոշումների ներկայացում,

13) ԵԱՏՄ-ում ընթացող ապրանքների և ծառայությունների միասնական շուկայի ստեղծման գործընթացի մշտադիտարկում՝ ապահովելու այդ գործընթացի՝ ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ և ՀԳԸՀ կիրարկման ճանապարհային քարտեզների, ինպես նաև ԱՀԿ համաձայնագրերով ՀՀ ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանելիությունը,

14) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից մշակվող և առևտրային/մաքսային կարգավորիչ բնույթի օրենսդրական և նորմատիվաիրավական ակտերի նախագծերի մշտադիրտարկում և փորձաքննություն՝ դրանք ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ-ի դրույթների հետ համադրման և ԱՀԿ շրջանակներում Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանելիության ապահովման նպատակով,

15) Վերոնշյալ մշտադիրտարկման, փորձաքննության և համապատասխանելիության ապահովման իրականացման նպատակով ՀՀ պետական կառավարման մարմիններից և ՀՀ էկոնոմիկային նախարարության ստորաբաժանումներից համապատասխան տեղեկատվության ստացում և վերլուծություն:

16) ԱՀԿ անդամ երկրների ծանուցումների մշտադիտարկում և վերլուծություն՝ ՀՀ արտաքին առևտրի հնարավոր խնդիրների վերհանման, ինչպես նաև հնարավոր բարենպաստ պայմանների հայտնաբերման նպատակով, համապատասխան տեղեկատվությամբ ՀՀ պետական մարմիններին իրազեկում,

17) ԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչի հետ համագործակցության և նրա գործունեության դիտանցման ապահովում,

18) ԱՀԿ համաձայնագրերի դրույթների ներքո ԱՀԿ քարտուղարության կողմից ՀՀ առևտրային քաղաքականության վերաքննության գործընթացի իրականացման շրջանակներում ժամանակացույցով սահմանված գործընթացների ապահովում,

19) ՄԱԿ-ի առևտրային և տնտեսական կառույցների և մարմինների հետ (UNECE, UNCITRAL, UNCTAD, UNESCAP, UN ITC և այլն) համագործակցության աշխատանքների իրականացում,

20) Նախարարի, ոլորտը համակարգող նախարարի տեղակալի, գլխավոր քարտուղարի, վարչության պետի հանձնարարականներով բաժնին վերապահված այլ գործառույթներ իրականացնում:

VI. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

12. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է վարչության պետը:

13. Վարչության բաժինների գործունեությունը կազմակերպում և ղեկավարում են Վարչության բաժինների պետերը:

14. Վարչության պետը անմիջականորեն ենթակա և հաշվետու է Նախարարին:

15. Վարչության բաժինների պետերը անմիջականորեն ենթակա և հաշվետու են Վարչության պետին:

16. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության բաժինների պետերից մեկը:

17. Վարչության բաժինների պետերի բացակայության դեպքում նրանց փոխարինում են բաժինների մասնագետներից որևէ մեկը:

18. Վարչության կողմից պատրաստված ներքին գրությունները ստորագրվում են Վարչության պետի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրան փոխարինող բաժնի պետի կողմից:

19. Վարչությունը իր իրավասության շրջանակներում կազմակերպում և իրականացնում է աշխատանքներ՝ համագործակցելով նախարարության այլ ստորաբաժանումների, ՀՀ շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ:

20. Վարչության աշխատողները կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով ստեղծվող միջգերատեսչական հանձնաժողովներում և այլ աշխատանքային խմբերում:

21. Վարչության պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիրազորությունների, շփումների և նեկայացուցչության խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: